Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Գ. Գույանին

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը**
   Տաթևիկ Կիրակոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   Կենսառեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Թայլանդի Թագավորություն, 2023 թվականի հուլիսի 17-18,

4. **Հրավիրող կողմը**
   «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի (CITES) քարտուղարություն,

5. **Գործուղման նպատակը**
   Մասնակցություն «Էլեկտրոնային CITES թույլտվությունների համակարգերը Ասիայում» տարածաշրջանային համաժողովին: Համաժողովը առնչություն ունի Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1902-Լ որոշման N 1 հավելվածի «Շրջակա միջավայրի նախարարություն» բաժնի 13.7 «Շրջակա միջավայրի նախարարության կողմից լիցենզիաների ու թույլտվություններ տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրում» կետով հաստատված միջոցառումների հետ:

6. **Քննարկված թեմաները և ելույթները**

2023 թվականի հուլիսի 17-18-ը տեղի ունեցած համաժողովի ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները"

- **Էլեկտրոնային ՍԻԹԵՍ թույլտվությունների համակարգերի ներկայացում,**
- **ՄԱԿ-ի գլոբալ հետազոտությունը թվային և կայուն առևտրի դյուրացում, 2023,**
- **Էլեկտրոնային CITES-ի իրականցման գործիքակազմ,**
- **Ռիսկերի կառավարում և սահմանային վերահսկողություն,**
- **CITES Species +API գործիքակազմ**
- **Երկչափ շտրիխ կոդերի կիրառում CITES թույլտվություններում**
- **Էլեկտրոնային թույլտվությունների տեղեկատվության փոխանակություն (EPIX),**
- **UNCTAD-ASYCUDA համակարգերի կիրառումը էլեկտրոնային թույլտվությունների տրամադրաման շրջանակներում**

Էլեկտրոնային թույլտվությունների տրամադրաման համակարգի ներդրումը հնարավորություն կընձեռի բարելավվել թույլտվությունների տրամադրման գործընթացի թափանցիկությունը, կրճատել կոռուպցիոն ռիսկերը, վայրի բնության պաշտպանության առևտուրն և կիեշտացնի կողմերի միջև համագործակցությունը՝ մասնավորապես կառավարող, գիտական, մաքսային մարմինների և տնտեսվարողների միջև, այդպիսով նպաստելով կոնվեցիայի ավելի լավ իրականացմանը:

Էլեկտրոնային եղանակով ՍԻԹԵՍ թույլտվությունների տրամադրումը համահունչ է «Արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» սկզբունքին և բաղկացած 4 փուլերից:

1. **Էլեկտրոնային թույլտվություն**. Էլեկտրոնային եղանակով ՍԻԹԵՍ թույլտվությունների հայտերի ընդունում, թույլտվության տրամադրում և էլեկտրոնային վճարում,
2. **Էլեկտրոնային հսկողություն**. Էլեկտրոնային եղանակով ինֆորմացիայի փոխանակում Մաքսային ծառայության և էլեկտրոնային Ռիսկերի գնահատում;
3. **Էլեկտրոնային հաշվետվություն**. Ավտոմատ գեներացված հավետվողականություն;
4. **Էլեկտրոնային ինֆորմացիայի փոխանակում**. Էլեկտրոնային թույլտվությունների փոխանակություն տարբեր երկրների կառավարման մարմինների միջև:

Բոլոր չորս փուլերի իրականացումն է ապահովում պրոցեսի ամբողջական թվայնացում: Իր վերջնական ներդրման փուլում էլեկտրոնային CITES թույլտվությունների համակարգը պետք է նպաստի հետևյալ պահանջների

իրականացմանը՝ էլեկտրոնային եղանակով թույլտվության հայցում և տրամադրում, ստուգումների պլանավորում և ստուգման արդյունքների գրանցում, թույլտվության տրամադրում, էլեկտրոնային վճարումների իրականացում, էլեկտրոնային տեղեկատվության փոխանակություն և աշխատանքնային պրոցեսների թվայնացված հոսքի ապահովում պետական մարմինների միջև, մասնավորապես՝ կառավարման մարմնի և մաքսային մարմնի միջև պատշաճ վերահսկողությունն ապահովելու նպատակով, ռիսկերի կառավարման ժամանակակից մեթոդների ներդրում, որոնք պետք է հիմնվեն բարեխիղճ տնտեսվարողներին արտոնությունների սահմանման վրա, արտահանող և ներմուծող երկրների միջև ապահով և ժամանակակից տեղեկատվության փոխանակում, հաշվետվությունների ավտոմատացված գեներացում:

Նպատակահարմար է այս պրոցեսի փուլային իրականացումը, ինչը հնարավորություն կընձեռի ավելի հեշտ ադապտացվելու, խնդիրները և բացերը վերհանելու և դրանք հասցեագրելու համար: Հանդիպման ընթացքում շեշտվեց Հայաստանի Հանրապետության համար վերը նշված փուլային մոտեցման կիրառումը:

Քննարկվեցին «Արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգի հետ էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման գործընթացի համապատասխանելիության կամ հակասությունների հարցերը: Բազմաթիվ երկրներ իրականացնում են այս երկու պրոցեսները իրար հետ առնչված կամ համահունչ, ինչը բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետության համար:

Քննարկվեցին նաև Հայաստանի Հանրապետության համար նախնական այսպես կոչված «Իրատեսության ուսումնասիրության» իրականացման հնարավորությունը, ինչը թույլ կտա գնահատել կարողությունները, բացահայտել առնչվող ֆինանսական ծախսերը և ունենալ ծրագրի համապարփակ իրականացման պլան:

Համակարգի ծրագրային ապահովումը իրականացվում է UNCTAD-ASYCUDA համակարգերի միջոցով, ինչը այլևս չի օգտագործվում Հայաստանի Հանրապետությունում: Քննարկվեցին առկա, արդեն ներդրված համակարգերի միջոցով դրա իրականացման հնարավորությունները, ինչը չբացառվեց, եթե որպես տվյալների փոխանակման հիմք ընդունվի միջազգայնորեն ընդունված UN/CEFACT և WCO ստանդարտները:

2D Bar Coder-ը ներկայումս կիրառվում են մի շարք երկրների կողմից, ինչը հեշտացնում և արագացնում է թույլտվությունների ստուգման գործընթացները: Քննարկվեցին երկչափ շտրիխ կոդերին ներկայացվող մինիմալ պահանջները, դրանց ընդունման հնարավորությունները որպես մեկ միասնական համակարգ և անվտանգ կիրառելիության հարցերը:

Ելույթներով հանդես եկան հետևյալ երկրները՝ Հայաստանի Հանրապետություն, Թայլանդի Թագավորություն, Բանգլադեշի Ժողովրդական Հանրապետություն, Կամբոջա, Ֆիջի, Հոնկոնգ (Չինաստան), Ինդոնեզիա, Մալայզիա, Մալդիվներ, Օման,

Ֆիլիպինների Հանրապետություն, Վիետնամ, Կորեայի Հանրապետություն,Սինգապուր:

Ներկայացվեցին յուրաքանչյուր երկրի թույլտվությունների տրամադրման գործընթացները՝ էլեկտրոնային կամ թղթային, քննարկվեցին հնարավորությունները և առկա խնդիրները:

Ելույթներով հանդես եկան նաև «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի (CITES) քարտուղարության և ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղ Օվկիանոսյան երկրների տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UN Economic and Social Commision for Asia and the Pacific) ներկայացուցիչներն ու փորձագետները:

Կոնվենցիայի քարտուղարությունը հայտնեց իր պատրաստակամությունը աջակցելու Հայաստանի Հանրապետությանը էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման գործընթացի ներդրման հարցում:

Կենսառեսուրսների կառավարման
վարչության գլխավոր մասնագետ,
CITES կոնվենցիայի ազգային համակարգող Ս.Կիրակոսյան